ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հուլիսի 2025 **թվականի** N 1400 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N 27/1 ՀԱՍՑԵԻ 795,72 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ 544,44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՌՉՆԱՆՈՑԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի 1-ին նրբանցք N 27/1 հասցեի հողամասը և թռչնանոցը սեփականության իրավունքով պատկանում է Գուրգեն Լյովայի Միքայելյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2435670 վկայական):

Քաղաքացի Գուրգեն Լյովայի Միքայելյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի 1-ին նրբանցք N 27/1 հասցեի 795,72 (յոթ հարյուր իննսունհինգ ամբողջ յոթանասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու և Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի 1-ն նրբանցք N 27/1 հասցեի 544,44(հինգ հարյուր քառասունչորս ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով թռչնանոցի նպատակային նշանակությունը արտադրականից բնակելիի, իսկ 30,63(երեսուն ամբողջ վաթսուներեք հարյուրերրորդական), 42,57(քառասուներկու ամբողջ հիսունյոթ հարյուրերրորդական), 7,8(յոթ ամբողջ ութ տասնորդական), 8,07(ութ ամբողջ յոթ հարյուրերրորդական), 30,96(երեսուն ամբողջ իննսունվեց հարյուրերրորդական), 7,31(յոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական), 7,87(յոթ ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական), 56,1(հիսունվեց ամբողջ մեկ տասնորդական), 9,83(ինն ամբողջ ութսուներեք հարյուրերրորդական), 9,13(ինն ամբողջ տասներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սենքերի գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերոհիշյալ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Գուրգեն Միքայելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հունիսի 04-ին N 7268 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի 1-ին նրբանցք N 27/1 հասցեի 795,72 (յոթ հարյուր իննսունհինգ ամբողջ յոթանասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով համապատասխանացնել Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, գործառական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Փոփոխել Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի 1-ին նրբանցք N 27/1 հասցեի 544,44(հինգ հարյուր քառասունչորս ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով թռչնանոցի նպատակային նշանակությունը արտադրականից բնակելիի, իսկ 30,63 (երեսուն ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական), 42,57(քառասուներկու ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական), 7,8(յոթ ամբողջ ութ տասնորդական), 8,07(ութ ամբողջ յոթ հարյուրերորդական), 30,96(երեսուն ամբողջ իննսունվեց հարյուրերորդական), 7,31(յոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական), 7,87(յոթ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական), 56,1(հիսունվեց ամբողջ մեկ տասնորդական), 9,83(ինն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական), 9,13(ինն ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքերի գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն, 120,61(մեկ հարյուր քսան ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքը՝ որպես օժանդակ շինություն, 37,29(երեսունյոթ ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքը՝ որպես մառան 43,17(քառասուներեք ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքը՝ որպես ավտոտնակ, 133.4(մեկ հարյուր երեսուներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սենքը՝ որպես անասնաշենք :

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Գուրգեն Լյովայի Միքայելյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-14 09:58:52 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ու Մ

«14» հուլիսի 2025 **թվականի** N 1399-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 07-Ի N 1319-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 1179-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 19-ի N 1179-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ավտոկայանի տարածք N 15/1 հասցեի առևտրի և սպասարկման օբյեկտի գործառական նշանակությունը փոփոխելու մասին>> N 1179-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) նախաբանում, որոշման 1-ին կետում <<79,47(յոթանասունինն ամբողջ քառասունյոթ հարյուրերրորդական)>>թիվը և բառերը փոխարինել <<77,02(յոթանասունյոթ ամբողջ երկու հարյուրերրորդական)>> թվով և բառերով:
2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 19-ի N 1179-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2025 թվականի հուլիսի 07-ի N 1319-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2025-07-14 09:57:04 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» հուլիս 2025 **թվականի** N1398-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 01-Ի N 1262-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 01-ի N 1262-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ավտոկայանի տարածք N 15 հասցեի ճաշարանի գործառական նշանակությունը փոփոխելու մասին>> N 1262-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը ՝
   1) Նախաբանում ,որոշման 1-ին կետում <<22,13(քսաներկու ամբողջ տասներեք հարյուրերրորդական)>>թիվը և բառերը փոխարինել <<9,37(ինն ամբողջ երեսունյոթ հարյուրերրորդական)>> թվով և բառերով:

2025-07-14 09:58:03 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«14» հուլիսի 2025 **թվականի** N1397-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 1132-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 16-ի N 1132-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 23/06/2025 թվականի N Կ-23062028-08-0091):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 16-ի <<Քաղաքացի Անդրանիկ Շավարշի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ն.Ստեփանյան փողոց N 18 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 469,33 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու մասին>> N 1132-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023FSABHS ծածկագիրը>> բառերը և թիվը:

2025-07-12 10:44:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հուլիսի 2025 **թվականի** N1396 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ՎԱԼԻԿՈՅԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՇԱՐՔ N 37 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 42.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Վարդան Վալիկոյի Նալբանդյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ N 940 տրված 30.05.2025թ.) Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 1-ին շարք N 37 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 42.36 (քառասուներկու ամբողջ երեսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Վարդան Վալիկոյի Նալբանդյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի նրա վրա առկա շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և հաշվի առնելով քաղաքացի Վարդան Վալիկոյի Նալբանդյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մարտի 26-ին N 5647 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացի Վարդան Վալիկոյի Նալբանդյանի (ծնված 1973 թվականի հոկտեմբերի 7-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 1-ին շարք N 37 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 42.36 (քառասուներկու ամբողջ երեսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վարդան Վալիկոյի Նալբանդյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-14 09:50:54 GMT+4
Հաստատված է ԷՀՆՍԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» հուլիս 2025 **թվականի** N 1395 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ.ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 24/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 58.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (49.54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ 58.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Հ. Ղանդիլյան փողոց N 24/6 հասցեի 58.23(հիսունութ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20022025-08-0025 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 23-ի N 26-Ա որոշումը, քաղաքացի՝ Սուսաննա Գևորգի Գաբրիելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի նոյեմբերի 15-ին N 21240 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Հ. Ղանդիլյան փողոց N 24/6 հասցեի 58.23(հիսունութ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (49.54(քառասունինն ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 476030 (չորս հարյուր յոթանասունվեց հազար երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սուսաննա Գևորգի Գաբրիելյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ. Ղանդիլյան փողոց N 24/6 հասցեի 58.23(հիսունութ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 612230 (վեց հարյուր տասներկու հազար երկու հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Սուսաննա Գևորգի Գաբրիելյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Սուսաննա Գևորգի Գաբրիելյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուսաննա Գևորգի Գաբրիելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սուսաննա Գևորգի Գաբրիելյանի միջոցների հաշվին:

2025-07-14 09:54:32 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԴ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«14» հուլիս 2025 **թվականի** N 1394 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 7.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 15.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (8.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 7.84(յոթ ամբողջ ութսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 15.68(տասնհինգ ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (8.79(ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2022KBXPTB ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 7.84(յոթ ամբողջ ութսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 15.68(տասնհինգ ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (8.79(ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Դավիթ Տոլիկի Ասատրյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-14 09:53:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2025 թվականի №1393Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ե. ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 60.31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 46.46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 08-ի №1347–Ա որոշումը, հողամասի ու շինությունների հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ե. Լալայան փողոցի հարևանությամբ գտնվող 60.31 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 46.46 քառակուսի մետր ներքին մակերեսով կիսակառույց բնակելի շինությանը տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ե. Լալայան փողոց, 20/9 բնակելի տուն**

2025-07-12 10:34:23 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2025 թվականի №1392-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ 271 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №08072015-08-0018) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23–Ի №3166-Ա, 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27–Ի №3235-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ինմասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի Արտավազդ Մանուկյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №9450 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1․ Գյումրի քաղաք, Սունդուկյան փողոց 271 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №08072015-08-0018) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ՝

1) 206.29 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գ. Սունդուկյան փողոց, 271**

2) 21.15 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գ. Սունդուկյան փողոց, 271/2**

2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 23–ի «Գյումրի քաղաք, Սունդուկյան փողոց 271 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №08072015-08-0018) երկու մասերի բաժանելու նպատակով նոր հասցեներ տրամադրելու մասին» №3166-Ա, 2024 թվականի դեկտեմբերի 27–ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 23–ի №3166-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №3235-Ա որոշումները:

2025-07-12 10:40:00 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2025 թվականի № 1391 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 03–Ի №1666-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 5-րդ մասով և 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ուժը կորցրած համարել Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 03–ի «Գյումրի քաղաք, Լալայան փողոց, 30 հասցեի շենքի հարևանությամբ գտնվող 259.11 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 102.01 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններին, 60.31 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց բնակելի շինություններին համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №1666-Ա որոշումը:

2025-07-12 10:21:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2025 թվականի №1390Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 7/18 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1225-0213) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արտյոմ Գևորգյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №9229 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված բաժանման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Գ. Նժդեհի փողոց 7/18 արտադրամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-1225-0213) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ՝

1) **3993.5** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գ. Նժդեհի փողոց, 7/18 շինություն**

2) **1013.0** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գ. Նժդեհի փողոց, 7/63 շինություն**

2025-07-11 15:53:08 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիս 2025 թվականի №1389 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՎՈՆ ՄԽԻԹԱՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒ, ԳԵՎՈՐԳ ՄԽԻԹԱՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒ ԵՎ ՀԵՐԻՔՆԱԶ ՎԱՐԴԳԵՍԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ 90.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 198.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 08-ի №1350–Ա որոշումը, քաղաքացի Լևոն Մարզպետունու դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №9451 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունու, Գևորգ Մխիթարի Մարզպետունու և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունու սեփականության իրավունքը ճանաչված 90.95 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններին և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած 198.8 քառակուսի մետր մակերեսով հողամասին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ե. Լալայան փողոց, 20/10 շինություն**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2025 թվականի №1388 Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 2/4 (ՎԿԱՅԱԿԱՆ №09112022-08-0036) ԵՎ Ն. ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 2/15 (ՎԿԱՅԱԿԱՆ №23072024-08-0038) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մխիթար Հունանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված № 9449 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Ռիժկովի փողոց 2/4 (վկայական №09112022-08-0036) և Ն. Ռիժկովի փողոց 2/15 (վկայական №23072024-08-0038) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ռիժկովի փողոց, 2/4 հողամաս**

2025-11-11 15:53:55 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2025 թվականի №1387Ա

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ, 150 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գրիգոր Սարգսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №9465 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ժառանգության իրավունքով քաղաքացի Գրիգոր Սարգսյանին պատկանող Գյումրի քաղաք, Աբովյան փողոց, 150 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., խ. Աբովյան փողոց, 150/1 բնակելի տուն**

2025-07-11 15:42:34 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հուլիս 2025 **թվական** N 1386 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ N 111 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի Պուշկինի փողոց N 111/1 հասցեի 49.78 (քառասունինը ամբողջ յոթանասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 64.89 (վաթսունչորս ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1089-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին N 51 որոշումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի համայնքի Պուշկինի փողոց N 111/1 հասցեի 49.78 (քառասունինը ամբողջ յոթանասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան ու դրա փաստացի զբաղեցրած 64.89 (վաթսունչորս ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ներկայացնել պետական գրանցման, համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝***

2025-07-11 12:51:00 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԴ-ի կողմից

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թվական ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2025 **թվականի** N 1385 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 10/6 ՀԱՍՑԵԻ 41,53 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի N 10/4 հասցեի 120,0 (մեկ հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասով առևտրի և սպասարկման օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Դանիել Կոլյայի Բաղդասարյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11012019-08-0015 վկայական):

Քաղաքացի Դանիել Կոլյայի Բաղդասարյանի կողմից լիազորված անձ Լևոն Միքայելյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18022025-08-0019 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի N 10/6 հասցեի 41,53 (քառասունմեկ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Դանիել Կոլյայի Բաղդասարյանին օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի N 52-Ա որոշումը և քաղաքացի Դանիել Կոլյայի Բաղդասարյանի կողմից լիազորված անձ Լևոն Միքայելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի մարտի 31-ին N 5632 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Դանիել Կոլյայի Բաղդասարյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի N 10/4 հասցեի 120,0 (մեկ հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասով առևտրի և սպասարկման օբյեկտին հարակից, Մանուշյան փողոցի N 10/6 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 41,53 (քառասունմեկ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ առևտրի և սպասարկման օբյեկտի ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 283816 (երկու հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Դանիել Կոլյայի Բաղդասարյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Դանիել Կոլյայի Բաղդասարյանի կողմից լիազորված անձ Լևոն Միքայելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-11 [illegible] GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2025 **թվականի** N1384-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 584-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 27-ի «Քաղաքացի Ալեքսան Միշայի Աբրահամյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 71.05 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 2 դուռը, ինքնակամ դռան ձևափոխված 1 պատուհանն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 249.55 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 584-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ որոշման մեջ տեղի է ունեցել վրիպում:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 27-ի «Քաղաքացի Ալեքսան Միշայի Աբրահամյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադե փողոցի N 2 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 71.05 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 2 դուռը, ինքնակամ դռան ձևափոխված 1 պատուհանն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 249.55 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 584-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
2. Նախաբանում «2023GE3B9T» թիվը և տառերը հանել:

2025.07.11 11:31:42 GMT-4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«10» հուլիսի 2025 թվականի N 1383 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՂԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴՍՏԵՐ՝ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԱՏԻ ԲԵԺԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՎ ԱԶԳԱՆՎԱՆ ՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2025 թվականի մայիսի 12-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Պ.Սևակ փողոց 1 շենք 74 բնակարանի բնակիչ՝ Հեղինե Համլետի Հովհաննիսյանը (անձնագիր՝ AU0661918, տրված՝ 29.03.2022 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով իր անչափահաս դստեր՝ 07.06.2019 թվականին ծնված Գայանե Մարատի Բեժանյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ126086) անվան և ազգանվան փոխում կատարելու վերաբերյալ:

Ընտանիքում առաջացած անախորժությունների պատճառով երեխայի մայրը՝ Հեղինե Համլետի Հովհաննիսյանը և հայրը՝ Մարատ Արմենի Բեժանյանը 2021 թվականի հունվարի 22-ին ամուսնալուծվել են (հիմք՝ պետական վկայական ամուսնալուծության մասին ԲԱ349457):

Նիստին ներկա գտնվող երեխայի մոր՝ Հեղինե Համլետի Հովհաննիսյանի հայտարարությամբ ծնված օրվանից անչափահասին չեն դիմել Գայանե անունով, իսկ հայրական տուն վերադառնալուց հետո արդեն դիմել են միայն Լյուսի անունով և Հովհաննիսյան ազգանունով:

Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը փաստում է, որ երեխան շուտով հաճախելու է դպրոց և նրա մոտ անվան և ազգանվան հետ կապված կարող է առաջանալ սթրեսային իրավիճակ և հոգեբանական բարդույթ, չընդունելով իր նախկին անունը և ազգանունը:

Ելնելով անչափահաս՝ Գայանե Մարատի Բեժանյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 46-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Հեղինե Համլետի Հովհաննիսյանի 2025 թվականի մայիսի 12-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 5900 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 04-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տալ համաձայնություն փոխելու անչափահաս՝ 07.06.2019 թվականին ծնված Գայանե Մարատի Բեժանյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ126086) անունը Լյուսի անունով և ազգանունը Հովհաննիսյան ազգանունով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հեղինե Համլետի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-09 17:36:39 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆ Գ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«10» հուլիսի 2025 **թվականի** N 1382 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության ազատ ոճի ըմբշամարտի՝ Անդրանիկ Հարոյանի հիշատակին նվիրված 2025 թվականի հուլիսի 14-16-ը Երևան քաղաքում կայանալիք ընտրական մրցաշարին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ըմբշամարտի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի հուլիսի 10-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության ազատ ոճի ըմբշամարտի՝ Անդրանիկ Հարոյանի հիշատակին նվիրված հուշամրցաշարին մասնակցելու համար 2025 թվականի հուլիսի 14-16-ը Երևան քաղաք գործուղել թվով 2 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 81.300(ութսունմեկ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
հուլիսի 10-ի N 1382-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության ազատ ոճի ըմբշամարտի՝ Անդրանիկ Հարոյանի հիշատակին նվիրված հուշամրցաշարին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մկրտչյան | Մուշեղ | Մարզիկ | 011860129 | 11802046815300 | 28.000 |
| 2. | Իգիթյան | Միեր | Մարզիկ | AL 0681968 | 11802059035200 | 28.000 |
| 3. | Մինասյան | Արտուշ | Մարզիչ | AV0668375 | 1510039314180200 | 25.300 |
| Ընդամենը՝ | | | | | | 81.300 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«10» հուլիս 2025 **թվականի** N1381 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑ № 19/5 ՀԱՍՑԵԻ 180.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ա. Հովսեփյան № 19/5 հասցեի 180.62 (մեկ հարյուր ութսուն ամբողջ վաթսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Սակայն պայմանավորված փաստացի քաղաքաշինական իրավիճակով և տարածքի կառուցապատման նախագծի պահանջներով հանդիսանում է ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողեր:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ա. Հովսեփյան № 19/5 հասցեի 180.62 (մեկ հարյուր ութսուն ամբողջ վաթսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2025-07-10 11:38:36 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» հուլիսի 2025 **թվականի** N 1380 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԱԿՈՎԿՈՒ ՓՈՂՈՑ №36 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 33.47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Աշոտ Սերյոժայի Տեփանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրված 2023 թվականի սեպտեմբերի 26-ին №705) Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոց № 36 հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 23.8 (քսաներեք ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն և 2001 թվականի մայիսի 15-ից հետո կառուցված է 13,54 (տասներեք ամբողջ հիսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (9,67 (ինն ամբողջ վաթսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով շինություններ:

Քաղաքացի Աշոտ Սերյոժայի Տեփանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 22.1-րդ կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023RJEJLM ծածկագրով մուտքագրման տեղեկանքը և քաղաքացի Աշոտ Սերյոժայի Տեփանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 21-ին № 743 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Աշոտ Սերյոժայի Տեփանյանին (ծնված 1955 թվականի մայիսի 9-ին) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոց № 36 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 23.8 (քսաներեք ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը ճանչել օրինական:
2. Քաղաքացի Աշոտ Սերյոժայի Տեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոց № 36 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 13,54 (տասներեք ամբողջ հիսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը, ինքնակամ բացված 2 (երկու) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 49821 (քառասունինը հազար ութ հարյուր քսանմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
